

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
(1897-1937)

- ՀԻՄԻ ՇԱՏ ԵՆ ԵԳԻՉՆԵՐԸ — ՀՈԳՈՒ ՈՒՉԱԾ ՏԱՂԸ ՉԿԱ
- ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
- ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ
- ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

ՀԻՄԻ ՇԱՏ ԵՆ ԵԳԻՉՆԵՐԸ — ՀՈԳՈՒ ՈՒԶԱԾ ՏԱՂԸ ՉԿԱ

Հիմի շատ են երգիչները — հոգու ուզած տաղը չկա,
Ամենայն տեղ խնդություն է՝ սրտի ուզած խաղը չկա,
Ուր ոտ **կոխես** — **բաղ** է հիմի, **շահնշահի** բաղը չկա,
Սան եմ գալիս **քուչա-քուչա** — սիրեկանի թաղը չկա:

Ես ռւմ ասեմ երգս հիմի՝ ոչ դու կուզես, ոչ էլ **յադը**,
Թեկուզ անուշ տաղերիցս չէ հեռացե **Ասսու** մատը.
Ոչ-ով ուզեց ականջ դնի, իմանա սրտիս գանգատը՝
Ուզում եմ սիրտս հովանա՝ արտասուքի շաղը չկա:

Ասում եմ թե՝ թողնեմ **սազը**, ամենքի պես մարդ **ըլիմ** ես,
Թե որ վարդ եմ — փուշ ունենամ, անհասնելի վարդ ըլիմ ես,
Դուշմանի հետ դուշման ըլիմ, վատերի հետ վատ ըլիմ ես,
Որ ինձ կարոտ ամեն անգամ ասեն՝ **սուփրի** աղը չկա:

Մարդիկ են փուչ ու **բեդամաղ** — աշխարհը լեն, լավ է, Չարենց,
Մարդու խոսքը մարդու սրտին անհանգչելի ցավ է, Չարենց,
Ականջ արա ազդու խոսքիս՝ ասում եմ թե **բավ** է, Չարենց,
Քեզ չեն սիրի, քանի որ քո սրտի տված **դաղը** չկա:

Կոխել – (ոտք) դնել
բաղ – այգի, պարտեզ
շահնշահ – Պարսից թագավոր, արքայից արքա
քուչա-քուչա – փողոց առ փողոց
յադ – օտար, խորթ, անծանոթ
Ասսու – Աստծո
ոչ-ով – ոչ ոք
Սազ – երաժշտ. գործիք
ըլիլ – լինել
դուշման – թշնամի
սուփրի – հացի սեղան
բեդամաղ – օտար, խորթ
բավ – բավական
դաղ – խարան այրվածք, փխբ. կսկիծ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բանաստեղծությունից դուրս գրիր համատեքստային բառեր և կիրառիր վերլուծությանդ մեջ:

2. Ներկայացրու Ե. Չարենցի կերպարը՝ ըստ բանաստեղծության:
3. Գնահատիր բանաստեղծության արդիականությունը:

Ամփոփում

Այս բանաստեղծությունը Եղիշե Չարենցը գրել է սայաթնովյան ոճով՝ կարծես որպես գուսաներգ, բայց բովանդակությամբ այն հիշեցնում է միջնադարյան ավելի վաղ շրջանի մեր մեկ այլ հեղինակի՝ Ֆրիկի գիրը:

Ե. Չարենցն ուզում է ազատորեն սիրել, նա ցանկանում է, որ կյանքն իր բանաստեղծության պես գունեղ, ռոմանտիկ լինի: Հեղինակը գիտակցում է, որ իրեն գրելու, ստեղծագործելու շնորհք է տրված, բայց ցավում, որ իր այդ տաղանդով չի կարողանում «զգաստացնել», ուշքի բերել մարդկանց, որ հրաժարվեն աշխարհի աղմկոտ ցոփությունից և իրական սիրո բերկրանքն ապրեն: Ե. Չարենցը ցավում է նաև, որ բանաստեղծության ուղղախոսությունը ուրիշներին կարծես հաճելի չէ, «դաղ» է, այնինչ հակառակը պիտի լիներ, չէ՞ որ գեղեցիկը պիտի ամոքի մարդկանց, հարկ եղած դեպքում սթափեցնի, արթնացնի ու հայացքն ուղղել տա դեպի կյանի մնայուն արժեքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Հազար ու մի վերք ես տեսել,– էլի՛ կը տեսնես,
Հազար **խալխի** ձեռք ես տեսել,– էլի՛ կը տեսնես:

Աշնան քաղած արտի նման՝ հազար զոհերի
Չհավաքված բերք ես տեսել,– էլի՛ կը տեսնես:

Գլուխդ չոր քամուն տված պանդուխտի նման,
Հազար տարվա **հեք** ես տեսել,– էլի՛ կը տեսնես:

Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Հովնաթան,
Ինչքա՜ն հանճար, խելք ես տեսել,– էլի՛ կը տեսնես:

Քո Չարենցին լեզու տվող երկիր Հայաստան,
Հազար ու մի երգ ես տեսել,– էլի՛ կը տեսնես:

Խալխ – ժողովուրդ **հեք** – խեղճ, թշվառ

1. Մեկնաբանի՛ր՝ ինչ պատկերներով է բանաստեղծը ներկայացնում իր հայրենիքը:
2. Բացատրի՛ր բանաստեղծության հետևյալ հատվածը. «Քո Չարենցին լեզու տվող երկիր Հայաստան, Հազար ու մի երգ ես տեսել,– էլի՛ կը տեսնես»:
3. Բանաստեղծության ո՞ր տունը հատկապես հավանեցիր, ինչո՞ւ:

Ամփոփում

Այս գրվածքը մեր երկրի՝ հարյուրամյակներ շարունակ տեսած ցավերի, ապրած ողբերգական էջերի մասին է: Զարմանալի է հայ ժողովրդի անցած ճանապարհը: Բանաստեղծությունից հասկանում ենք, որ ոչ մի ազգ չի կարող դիմանալ այսքան դառնություններին ու դժվարություններին: Եվ Ե. Չարենցն ասես արդեն գիտի, որ սա մեր ճանապարհն է, ինչպես ժողովուրդն է ասում՝ մեր խաչը: Սակայն բանաստեղծը վստահ է նաև՝ մաքառումների այդ ճանապարհին Հայաստանը շարունակելու է զոհվածների փոխարեն նոր ծնունդներ ունենալ, չնահանջել, առաջ ընթանալ:

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ձյունապատ լեռներ ու կապույտ լճեր:
Երկինքներ, որպես երազներ հոգու:
Երկինքներ, որպես մանկական աչեր:
Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջը լճի
Ու նայում էի թափանցիկ հեռուն –
Զարթնում էր իմ մեջ քո սուրբ անուրջի
Կորուստը այն հին, աստղային, անհո՛ւն:

Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին:
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն
Խառնելով հոգիս աստղային մութին...



ԱՍՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Բանաստեղծի տեսիլքում ինչպե՞ս է երևում հայրենի բնաշխարհը:
2. Ինչպիսի՞ նուրբ ակնարկով է բանաստեղծը հիշում սիրած աղջկա գոյությունը:
3. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությունը: Դու ինչպե՞ս կավարտեիր այն:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեկնաբանի՛ր՝ ինչ պատկերներով է հեղինակը ներկայացնում հայրենի երկիրը:
2. Ներկայացրո՛ւ «Հայրենիքում» բանաստեղծության իրական և տեսլային պատկերն ըստ քեզ՝ օգտվելով հեղինակային բառապաշարից:
3. Գտի՛ր յուրաքանչյուր տան բանալի բառը և համապատասխանաբար վերնագրի՛ր:
4. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր քեզ անծանոթ բառերն ու արտահայտությունները և բացատրի՛ր դրանց նշանակությունը:

Ամփոփում

Այս բանաստեղծությունը զետեղված է Եղիշե Չարենցի «Տեսիլաժամեր» շարքում (1915): «Տեսիլաժամեր», այսինքն՝ տեսիլքի ժամեր: Այս գրվածքը ձոն է հայրենի բնաշխարհին:

*Երիտասարդ, դեռևս երազկոտ բանաստեղծը հավանաբար այդ պահին միայնակ նստած է եղել ձյունածածկ մի լեռան առջև և իջնող գիշերվա հետ նրա հոգին լցվել է հայրենիքի հանդեպ մի քաղցր գորովանքով, նաև ինչոր բանի կարոտով, որ թողնվել է անցյալում: Քնարական հերոսը մտովի զրուցում է կարծես մարմին առած, **անձնավորված** հայրենիքի հետ: Հայաստանը, գուցե Կարսը՝ բանաստեղծի ծննդավայրը, նրա սրտում է, և իջնող երեկոն, շրջակայքի լռությունն ու թափանցիկ հեռուն նվիրական հույզեր են արթնացնում, որոնք երբեմն դժվար է նկարագրել այլ կերպ, քան բանաստեղծորեն, հաճախ վերացարկված, մանավանդ երբ շատ երիտասարդ ես:*

Անձնավորումը ոճական հնարք է, որով բնությունը, առարկաներն ու կենդանիները շնչավորվում են, օժտվում մարդկային հատկանիշներով:

- Ի՞նչ է նշանակում «քնարական հերոս»:

- Բանաստեղծության մեջ ի հայտ եկող մարդկային կերպարը, որի բնավորությունը բացահայտվում է որևէ տիպական զգացմունքի կամ տրամադրության միջոցով, կոչվում է «քնարական հերոս»: Քնարական հերոսը տարբերվում է վեպի, պատմվածքի կամ դրամայի մեջ պատկերվող կերպարներից իր հոգեկան-զգացմունքային առանձին վիճակների բնութագրումով:

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը **մով**
Եվ Կարինե Քոթանաձյանին անգամ չասած մնաս բարով–
Ա՜նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Անց եմ կենում, շուրջս–մարդիկ, շուրջս դեմքեր հազար–հազար.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար.
Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ո՞ւր հասար,–
Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են **տապարով**:

Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի.
Ինչ–որ մեկի սրտում բացված – վերք է կարծես այս կյանքը մի.
Եվ ո՞ւմ համար–էլ ո՞ւմ համար **կարոտակեզ** երգե հիմի
Սիրտս՝ լցված տարիների սեղմ արձիձով ու կապարով:

Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի–
Ես–հաշմանդամ ու խելագար ու հավիտյան **վտարանդի**
Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի **եզերքը Ամենտի**–
Իմ բարձր, հին ու աստղային երազների ճանապարհով...

Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն.
Թե Կարինե Քոթանաձյանին տեսնեք Կարսի փողոցներում–
Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ– մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ...

Մով – մավի, կապույտ
տապար – կացին, կացնի ձև ունեցող սառը զենք
կարոտակեզ – կարոտից կիզվող, կարոտավառ
վտարանդի – տարագիր, պանդուխտ, հայրենիքից հեռացած և օտարության մեջ ապրող մարդ

ամենտի եզերք – այլաշխարհային եզերք
քերթվածք – բանաստեղծություն, ոտանավոր
ունայն – դատարկ, սին

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւմ է նվիրված «Տաղ անձնական» բանաստեղծությունը:
2. Ո՞ւր է պատրաստվում հեռանալ բանաստեղծը:
3. Ի՞նչ գաղափար է արտահայտում բանաստեղծությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պատմի՛ր՝ ինչի մասին է բանաստեղծությունը, խոսքիդ մեջ օգտագործի՛ր համատեքստային բառապաշար:
2. Մեկնաբանի՛ր՝ բանաստեղծությունն ինչու է Ե. Չարենցը վերնագրել «Տաղ անձնական»:
3. Գնահատի՛ր բանաստեղծության գեղագիտական հատվածները:
4. Կարդա՛ «Տաղ անձնական» բանաստեղծության 1-ին և 5-րդ տները և մեկնաբանի՛ր՝ կիեռանայի՛ր Հայաստանից. եթե այո՝ ինչո՞ւ, եթե ո՛չ՝ ինչո՞ւ:
5. Բանաստեղծությունից որևէ տո՛ւն ընտրիր և վերլուծի՛ր՝ բնութագրելով քնարական հերոսին:

Ամփոփում

«Տաղ անձնական» բանաստեղծությունը Եղիշե Չարենցի վաղ շրջանի քերթվածքներից է: Հեղինակն այն գրել է, երբ դեռ ընդամենը 22 տարեկան էր՝ 1919 թ.: Բանաստեղծությունը նվիրված է Կարինե Քոթանճյանին: «Տաղ անձնականը» բանաստեղծը հեղինակել է երիտասարդ տարիքում, սակայն եթե ընթերցողը չիմանա դա, կկարծի, թե իր կյանքի մայրամուտին մոտեցող բանաստեղծն է այն գրել, որ տեսել է բազում դժվարություններ, ապրել հիասթափություններ, ունեցել անկումներ, սայթաքումներ, բայց կրկին ոտքի է կանգնել:

Աշխարհի խինդը բանաստեղծին արդեն ***ունայն է*** *թվում, ինքը՝* ***վտարանդի****, բայց հույսը վառ է նրա սրտում, հայացքը՝ ուղղված երկնքին՝ լի հոգևոր, անտես խաղաղության սպասումով: Կարինե Քոթանճյանի անունը հիշատակվում է նախ գրվածքի սկզբում, ապա նաև ավարտին: Ընկերության, ընկեր ունենալու գիտակցումն է գուցե ուժ տալիս՝ կյանքի թոհուբոհում դիմակայելու և բարու հանդեպ հավատը երբեք չկորցնելու: Գուցե...*